# ՀԱՆԳԻՍՏ
# Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃՅԱՆԻ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից խոր ցավով տեղեկացնում ենք, որ դեկտեմբերի 2-ին, երեկոյան ժամը 8-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգներում անակընկալ, սրտի կաթվածից վախճանվել է Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Հանգուցյալ Սրբազանը, լինելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան, վերջին տարիներին բնակություն էր հաստատել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և իր ծառայությունն էր բերում Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը և Հայրենիքին:

Մայր Աթոռում մշտապես բարձր է գնահատվել Սրբազան Հոր հոգևոր, մշակութային, հասարակական գործունեությունը, Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման գործում նրա մեծագույն ավանդը, ինչպես նաև հայագիտական և գրական բազմավաստակ ծառայությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, պաշտոնեությունը և հավատացելոց դասը խորապես սգում է Սրբազան Հոր անժամանակ մահը և աղոթում հանգուցյալի հոգու հանգստության համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանուն Ամենայն Հայոց Հայրապետության հոգևոր դասի և պաշտոնեության, ցավակցություններ է հայտնել Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին:

Սրբազան Հոր հուղարկավորությունը, համաձայն իր կամքի, կատարվելու է Անթիլիասում:

Դեկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարտ Ս. Պատարագի, կկատարվի հոգեհանգստյան արարողություն՝ Սրբազան Հոր հոգու հանգստության համար:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

*

* *

Մեսրոպ. արքեպս. Աշճյանը (ավազանի անունով՝ Հրայր) ծնվել է 1941 թ. հունվարի 3-ին, Բեյրութում:

Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Ս. Նշան ազգային վարժարանում:

1957-1961 թթ. սովորել է Անթիլիասի Դպրեվանքում:

1961 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1962-1963 թթ. Շվեյցարիայում, ապա՝ ԱՄՆ-ում հետևել է առանձին դասընթացների:

1963 թ. ստացել է վարդապետական աստիճան:

1964-1970 թթ. Անթիլիասում ու Հալեպում կատարել է ուսուցչական և դասախոսական աշխատանքներ, եղել «Հասկ»-ի խմբագիր:

1970 թ. մեկնել է ԱՄՆ և Նյու Ջերսիի Բրինստոնի աստվածաբանական համալսարանում ուսանել աստվածաբանություն, եկեղեցական պատմություն, ծիսագիտություն, ստացել մագիստրոսի աստիճան՝ Ներսես Լամբրոնացու «Հռոմկլայի ճառ»-ի մասին գրած ուսումնասիրության և թարգմանության համար, ստացել նաև մագիստրոսի երկրորդ աստիճան:

1973-1977 թթ. Իրանում (Սպահան, Նոր Ջուղա) վարել է առաջնորդի պաշտոն:

1977 թ. ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Հյուսիսային Ամերիկայի Արևելյան շրջանի և Կանադայի թեմի առաջնորդ:

1976 թ. ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան:

1977 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Աթոռակից Կաթողիկոսի:

1983 թ. արժանացել է արքության պատվի:

1993 թ. Երևանում հիմնել է «Ներսես Մեծ» բարեգործական հիմնադրամը:

1996-2000 թթ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վարել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-տնօրենի պաշտոնը:

2001 թ. Երևանում հիմնել է «Մուղնի» հրատարակչությունը:

Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը բազմաթիվ գրքերի հեղինակ է: Նրան շնորհվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում: